

ՌՈՒՍՆԱՏԱՆ

Ռուսաց վեհապետ կայսրը չափաւորեց հրէից համար տուած ութագին կանոնները . որով կը հրամայէր անոնց որ սահմանազուխներէն ելլեն ու ներսի քաղքներուն մէջ բնակին : Իսկ կը ստուի թէ աւտենէ մը ետքը՝ քանի մը հարկաւոր չափաւորութիւններ ալ պիտի ըլլան : Յիշեալ ութագին կանոնները համառօտիւ կը ընենք հոս :

- 1. Քարաշէն տուն ունեցող հրէաները չորս տարի կրնան կենալ իրենց բնակարանը , երկու տարիին տեղը :
- 2. Փայտաշէն տուն ունեցողները կրնան իրէք տարի կենալ , փոխանակ մէկ տարուան :
- 3. Ի՞նչպէս հրէաներուն կառավարութեան կողմէն փայտ պիտի տրուի որ տուն շինեն իրենց նոր բնակած քաղաքը , տեղափոխութիւն ընելէն ետեւ :
- 4. Հինգ տարի ազատ պիտի ըլլան հարկ (վերկի) տալէն :
- 5. Մեծ գործատուներ ունեցողներէն տեղեկութիւն ուզելու է եկամտից տեսուչը , զիտնալու համար թէ արժան է արդեօք թողուլ զանոնք իրենց բնակարանը :
- 6. Վերջապէս , եկամտից ու ներքին գործոց տեսուչները կը հրահարուին առաջարկութիւններ ընել , որոնց նպատակը պիտի ըլլայ ութագին մէջ վերջին անգամ չափաւորութիւններ մոցորենելու :

ՀՈՒՆՏԱՆ

Հանգուցեալ Վասաւի կոմսին (նախորդ Հորանտայի թագաւորն է) կտակադիրը բացին մետրոս սովորական կերպով , ու տեսան որ 40 միլիոնի չափ Հորանտայի Ֆիօրին ձգեր է Վիլյոմ ք թագաւորին . 20 միլիոն Ֆրետերիկոս իշխանին , ու 20 միլիոն Իւրուսիոյ Վալէրի իշխանուհիին : Իր կնոջը Վասաւի կոմսուհիին՝ տարեկան եկամուտ 25,000 թալէր , կահարասիք , ազամանդէ զարդեր և կարուած մը : Կերենայ թէ կոմսուհին խնդրած է որ աւելի բան չթողու իրեն : չուզելով վնասել ()րանժի տանը :

նացըները համար Վրան՝ որ ամենուն յիշատակութեան մէջ ողջ էր : ՎՍՂ ամենէն առաջ գուն վկայէ ինձի , կենդանի հարուած Վրչակունեաց իշխանութեան , գուն ինձի բարձր ձայնով վկայէ Շապուհ , «Վրանի՛ անոր որ Հայոց գունդին տէր է , անանկ տիրասէր ու միաբան և միամիտ զօրքերուն» :

Վյոպէս օտարներուն վկայութիւններովը մեր ոսոխը լեցընելէն ետքը , ես ինքնս հիմնայ առաջ անցնելով կը սեմ . Պլտի բան մը կը սեպտի ես մերիւքիններուն այսչափ առաքինութիւնը , թէ որ անոնց մէջ անմիաբանութեան ընտանի պատճառներ չըլլային նէ . վասն զի առաքինութիւնը հոնտեղը փառաւոր կերակնայ՝ որ հակառակներուն կը յաղթէ . և ահա մեր նախարարներուն ազատական օրէնքներէն աւելի ո՞ր բանը այնքան անմիաբանութեան կը բարդէր . նախանձէն ու փառաւորութեան նէն աւելի ի՞նչ բանի կը հրապարակուէին . ու ինչպէս աս կիրքերուն տէր եղան մերիւքինները : Իմաստութեամբ ու շատ իմաստութեամբ : Վրաւարութիւնը առաքինութեան օգնական մը ըլլալու համար ունեցան , գովելի մտլութեան մը պէս , գիտէին չափու մէջ գնել զան , հրաշալի գործերով միաբանութիւնը : Իսկ թէ որ մէկը չուզած ու օրինակէ դուրս բան մը կը սեպտէ քանի մը ցեղերու թշնամութիւնները ինչպէս Վրչակունեացը ու Որդունեացը , ինձի կերակնայ թէ անիկա կուզէ որ տերակներով լեցուն

ԿԱՆԻՑԻԱ

ՎՍՊՊՎՊ : Ստանիալաւոս Սքարպէք կոմսը իր բոլոր մեծ հարստութիւնը , որն որ դրեթէ մէկ ու կէս միլիոն արծաթ ֆիօրին կընէ , այսինքն 17,000,000 դրուուշի չափ . կալեցիայի աղքատներուն ու որբերուն շէնք մը շինելու համար թող տուաւ : Վս մեծ բարերարը իր կամքը ասանկ կը յայտնէ , անցած տարի օգոստոսի 1ին տէրութեան տուած դրոյն մէջ : Վախ . Վս շէնքին մէջ ինչուան 400 աղքատ ծեր մարդիկ թէ այր և թէ կին , բնակարան , կերակուր , զգեստ , ու իրենց զօրութեան համեմատ գործ մը ունենան : Երկրորդ . Որք կամ մարդ չունեցող աղաք թէ մանչ թէ աղջիկ , ինչուան 600 հոգի , կերակուր , հագուստ ու բնակարան ունենան . ասկէ զատ իրենց պատշաճ կրթութիւն և ուսում ստովին , ու ապագայ կեանքերուն մէջ իրենց ապրուստը վայելչօրէն հոգալու համար արուեստ մը : Վս մեծ գործքիս համար հարկաւոր եղած շէնքը Վեմպերկէն չորս մղոն հեռու Տրոհովիցէ պիտի շինուի :

Վեհապետ կայսրը Վստրիոյ այս տարուան յունվարի 27ին տուած բարձր որոշմամբ , այս բարերարին կամքը հաստատեց . ու անոր հայրենեացը ըրած մեծ բարեքը վարձատրելու համար , իրեն Ունկարիայի Սուրբ Ստեփաննոսի կարգին երկրորդ աստիճանի խաչը հաճեցաւ մարդասիրտապէս շնորհել :

Չնէք կրնար բանիւ բացատրել ասանկ մեծ բարերարութիւնէ առաջ եկած օգուտները . բայց հարկ ալ չկայ , որովհետեւ ամէն մարդ ինքիմէ կիմանայ : Երանի՛ թէ ամէն հարուստները իրենց հարստութիւննին ասանկ աղէկ ու մարդասիրական գործքերու բանեցրէնէն . ան տանն մէկ կողմանէ աշխարհքիս վրայէն զորմէ լինելուն ու հետեւաբար մոլի մարդիկներուն թիւը կը բիւնար , մէկալ զիէն ալ բարերարներուն անունը անմահ ու օրհնութեամբ կը մնար երկրիս վրայ :

ծառաստանը ու մեծ ովկիանոսը ամենեկին չթնտան մրրիկներուն ատենը , ու չէ տեսեր և չէ քններ անիկա Վարուպոյու մէջ կարուածքի իշխանութեան օրէնքներուն համար եղած խաղութիւնները , պատերազմները , նենգութիւնները , իշխանաց ընտելութիւնը ու ժողովրդոց լրբութիւնը : Որքան դարեր ունցան ու որքան մարդիկ մեռան ինչուան որ ան վնասները ու վտանգները դադարեցան նէ . ու չեմ գիտեր թէ բոլորովին դադարեցան մի : Եւ ի՞նչպէս շատ չզարմանանք մերիւքիններուն վրայ , որ ազիտութեան դարերուն մէջ ալ ան գեղեցիկ առաքինութեան չափը հասան , ինչուան հազար տարուան թագաւորութեանը մէջ հազիւ թէ երկու իրեք անգամ մէջերնին խաղութիւն ինկաւ :

Որտեղ երեցաւ բնաւ Հայաստանի մէջ Վարուպոյու մայրաքաղաքներուն գարշելի տեսիլքը , ուր հարուստը փափկութեան մէջ կապրի ու աղքատը անոր ետէն նըղովը կուտայ : Վրչարմանար պարսիկը , կըսէ Վրչիչէ , թէ ի՞նչպէս շէն կը մնար երկիրը ուսկէց այնքան դանձր կերթար թագաւորական դուռը . ու չէր գիտեր թէ ժողովրդոց հաւասարութիւնը , ու իշխանաց առատաձեռնութիւնն էր որ զան կը հոգար : Ու թէ որ աս առաքինութիւնը մեր մէջը պակաս ըլլար նէ , որքան խղճալի աղէտներու չէր պատահեր Հայաստան աշխարհքը , մանաւանդ անիշխանութեան . . . ժամանակը : «Թէպէտ

ՅՈՒՆԱՏԱՆ

Վս երկրի սահմանադրութեանը վերջին յօդուածները զնելով հոս , արժան կը համարենք ծանուցանել մեր յարգի ընթացողներուն , որ հիմակուհի մա խաղաղութեան մէջ է Յունաստանի թագաւորութիւնը , թէպէտեւ մասնաւոր կիրքերը զեռ բոլորովին հանգարտած չեն : Ո՞րն թագաւորին ցուցըցած խոհեմութիւնը հիմակուան պարտաւնեան մէջ , և քանի մը երեւելի աստեղակալ իշխաններուն իմաստուն զնայքը մեծ յոյս կը տան որ ամէն բան քիչ ատենի մէջ կարգի մտնալով , խաղաղ մարդկանց սերմանած անկարգութիւնները զխտովին անհետ պիտի ըլլան : Ուստի այնպէս կերակնայ որ Յունաստանի ձախտողութեանց վախճանը հասեր է , ու այսուհետեւ յաջողութիւն ու հանգիստ օրեր պիտի տեսնեն աս տեղի բնակիչները , թէ որ սահմանադրութեան կանոնները հաստատ պահուին :

Սահմանադրութիւն : Ընդունուած յօդուածները : շարունակութիւն և վերջ : 1)

Յօդ . 79 : Երկրակոյտին անգամները պիտի ընդունին , իբրև փոխարէն , ամիսը 500 տրախմի , որ չափ ատեն որ քըշէ իրենց ժողովները :

Յօդ . 80 : Վրբայական գերդաստանէն մէկը չկը նար տէրութեան ատենակալ իշխան ըլլալու :

Յօդ . 81 : Վտենակալ իշխանները անտեսը կրնան ընտրութեան ձայն ունենալու (այսինքն իրենց կարծիքը ըսելու) թէ Երկրակոյտի և թէ երեսփոխաններուն ժողովին մէջ , երբոր անոնց անգամ ըլլան . բայց կրնան մոնալ երկու խոհարարաներն ալ , ու իրենց բաժին ալ միտ դրուելու է երբ որ ինզընն նէ : Երեսփոխաններու խորհրդարանը ու Երկրակոյտը կրնան պահանջեր որ ատենակալ իշխանները ներկայ գտնուին իրենց խորհրդներուն :

Յօդ . 82 : Վրբայական հրաման մը՝ գրով կամ կենդանի ձայնիւ տրուած , չկրնար ատենակալ իշխաններուն :

1) Տես՝ օրագրիս 177-178-179-180-182 թիւերը :

Թագաւոր առաջնորդ մը չունէին և ոչ գրոսի օտարներէն օգնական մը , կըսէ պատմագիրը , սակայն իրենց առաքինութեամբը . . . նախարարաց բոլոր զօրքերուն գնդովը ամէն մէկ անէն կուգային մէկտեղ կը ժողովէին¹⁾ :

Իսկ ո՞ր ազգը կամ ո՞ր ժողովուրդը Վերբովոյ ժամանակէն ինչուան Վշքէֆ Շապան , Վեկիացոց բրնտութիւնները , Պարոնց դաւաճանութիւնները , Յունաց ու Հուսոնց կեղծաւորութիւնները , Վիլթացոց ու բոլոր բարբարոսաց անգթութիւնները կը իրով ինչուան այսօր երեւելի է իբրև կենդանի ազգ մը : Բարբընի , Վիտուէի ու Վեմիկայ ցիրոցան եղած աւերակներ , ո՞ր են ձեր տերանց դուկները : Եւ կրնան , վասն զի շատ դարեր անցնելով մոռցան անոնց անունները , ինչու որ միաբանութիւնն է միայն որ շատ դարեր կենդանի կը պահէ ազգերը : Վսիայի ազգերուն ու դաւաճաններուն փոխուած ժամանակը , թորգոմայ տունը՝ Վոյի ատենէն ինչուան այսօր ամէն փոփոխութեանց տեսնողը ու վկան ըլլալով՝ իր առջի լեզուովը կը պատմէ բոլոր ազգաց , իր ու անոնց անցքերը : Վսե թագաւորական գահը վերցուած ժամանակն ալ , Հայաստանեայց եկեղեցւոյ ուխտը՝ ազգին միաբանութիւնը անվտանգ կը պահէ , իմաստութիւնը իրեն օգնական անելով . իմաստութիւնը՝ որ Հայոց պանդխտութեան բոլոր դաւաճաններուն մէջ տանելու է . Գ :

խոնկերը ազատ կացուցանել իրենց զործոցը համար պատասխանատուութենէն :

Յօդ . 83 : Արեւիօրիանները խորհրդարանը իրաւունք ունին դատախազ ըլլալու աստեակալ իշխաններուն , ու կանչելու զանոնք Օտերակոյտին ժողովը որ դատէ հրապարակաւ իր ատեանը :

Մասնաւոր օրէնք մը պիտի որոշէ թէ ինչ բանի վրայ պատասխան տալու պարտականութիւն ունին աստեակալ իշխանները , ինչ պատիժ տրուելու է անոնց . ու ինչպէս դատատան պիտի տեսնուի , թէ որ ամբաստանութիւն մը ըլլայ անոնց համար :

Յօդ . 84 : Ինչուան որ աս մասնաւոր օրէնքը հրատարակուի , պաշտօնատարներուն պարտականութեանը համար , երեսփոխաններուն խորհրդարանը կրնայ դատախազութիւն ընել անոնց ու Օտերակոյտին ալ կըրտէ , թէ որ մեծ նենգութիւն մը հասարակաց գանձուն շրայութիւն մը ըրած են , ընդդէմ օրինաց զրամ հաւաքելով կամ սահմանադրութեան կանոնները չպահելով :

Յօդ . 85 : Թագաւորը չկրնար ազատութիւն շրջանակէն աստեակալ իշխանի մը որ Օտերակոյտէն դատաւարուած է , ինչուան որ Օտերակոյտը կամ երեսփոխանները ժողովը չենդրեն :

Գատաւարանի իշխանութեան վրայ :

Յօդ . 86 : Թագաւորէն ընտրուած դատաւորները պիտի դատաստան ընեն :

Յօդ . 87 : Գատաւորներուն պաշտօնը մինչև 'ի մահ պիտի տևէ : Մասնաւոր օրէնք մը որ աս սահմանադրութեան հրատարակուելէ հինգ տարի անց նկէն ետեւ տրուելու է , պիտի որոշէ թուականը որ ան ատենէն սկսուի դատաւորաց անփոփոխութիւնը :

Նոյն օրէնք որ դատաւորաց անփոփոխութիւնը կրկին , չեն կրնար իրենց պաշտօնէն զրկուել ինչուան որ առաջուց դատատան չըլլայ :

Յօդ . 88 : Մասնաւոր օրէնք մը պիտի կանոնաւորէ պաշտօնէ հրաժարուելը Օտերակոյտի անդամներուն ու չփոխուելու դատաւորներուն պաշտօնէն :

րուն ու չփոխուելու դատաւորներուն , որոնք իրենց ծերութեանը կամ հիւանդութեանը համար անկարող կըլլան ծառայելու :

Յօդ . 89 : Արքայական զործակալները , փոխանորդները ու խաղաղութեան դատաւորները կըրտին :

Յօդ . 90 : Մարդ չկրնար բուն ուրիշ դատաւորներու առջին ելլել , քան թէ անոնց որ օրէնքը սահմանէր է . և հետեւաբար նա չէ արատքոյ կարգի երեսփոխաններ ու ատեաններ կարգել 'որ և իցէ անունով :

Յօդ . 91 : Ահաբեր ատեաններուն մէջ հրատարակաւ պիտի ըլլան , թէ որ բարի վարուց ու հասարակաց բարեկարգութեանը վնասակար չեն . բայց թէ ասանկ ըլլան ատեանները պիտի յայտնեն վճռով մը :

Յօդ . 92 : Բնական գատողութեան պատճառը պիտի խնայուին ու կարգան հասարակութեան առջին :

Յօդ . 93 : Ըն պաշտօնատարներուն ժողովը որ հաստատուած է յանցանք մը ստուգելու համար , անխափան կըմնայ :

Յօդ . 94 : Քարաքանդութեան դէմ եղած յանցաւորները նոյն պաշտօնատեղիները պիտի դատեն , նմանապէս տարադրութեան յանցանքները , ամէն անգամ որ մասնաւոր կենաց զործողութեան մը չեն վերաբերիր :

Յօդ . 95 : Գատաւոր մը չկրնար ընդունիլ թուշակաւոր պաշտօն , բայց կարող է հասնուարանի վարժապետ ըլլալու :

Յօդ . 96 : Մասնաւոր օրէնք մը պիտի կանոնաւորէ պատերազմի խորհուրդները և ծովային զորութեան ատեանները :

Ընդհանուր կանոնք :

Յօդ . 97 : Մասնաւոր օրէնք մը պիտի որոշէ թէ ինչ կերպով ընդունել ըլլալու է Օտերակոյտի անդամներուն ու չփոխուելու դատաւորներուն պաշտօնէն :

ԸՈՒՆԻ

Բամբակեղևի և Մաւի :

- Գասք մը շակաց երկասեր
- Յականակիտ մերձ յաղբեր
- Ուտգէին հանդարտիկ
- Բամբակենեաց դաշտ փոքրիկ :
- Օգոյշ համայն մեծապէս,
- Մի ըզճառոցն զհանդէս
- Բամբակենեաց սպիտակ
- Մասնել ոտիցն 'ի յատակ :
- Սաւի անդէն հըրացայտ
- Ի բարկութիւն խօլադատ .
- Չայնեալ ահեղ առ նոսայ
- Բազանալեօք որոտայ :
- Վա զիւրդ ինձ համանուն
- Կոչի գա ծառ սննդիուն .
- Որ զերթ թըզուկ 'ի հասակ
- Օտերակա յաճի բովանդակ :
- Մինչ յեթերանն 'ի կամար
- Չդի հասակ իմ երկար .
- Նա , իմ ստուար է մարմին
- Իւ իմ սաղարթը կաթոգին ,
- Բնդ որոց քաղցը հովանի
- Թուշուք նստին 'ի յարի ,
- Ի խիստ տօթոյն և սաստիկ

նէ հրաժարուելը , անբժշկելի հիւանդութեան ու ծերութեան պատճառաւ :

Յօդ . 98 : Որ և իցէ օտարական բանակի զօրք չկրնար տերութեան ծառայել , բնակիլ երկրիս մէջ կամ ասկէ անցնիլ , թէ որ օրէնքով մը հրաման եղած չէ :

Յօդ . 99 : Օրինուորները ու ծովային զօրքերը իրենց աստիճանէն , սրտիւէն ու թոշակէն չեն զըրկուիր , բայց մինակ ան զխաղաճներուն մէջ ու ան կերպով որ օրէնքը որոշէր է :

Յօդ . 100 : Բնաւ երդում չպահանջուիր անանց օրինաց , որ կըրպատուիրէ նոյն երզումը ու կըսահմանէ :

Յօդ . 101 : Հոգաբարձութեան ատեանները խափանուած են : Բոլոր կուռով զործքերը ներկայ սահմանադրութիւնը հրատարակուելէն ետեւ , սովորական ատեանները պիտի խրկուին , որ իբրև հարկաւոր զործք հոն դատուին : Ծովային ատեան կամ իրաւաւորութիւն կուռոտ զործքերուն վրայ , ասկէ ետք օրէնքով միայն պիտի հաստատուի : Գատաւորանի մը իրաւունք ունենալու վէճերը , Արխապագաւ պիտի դատէ :

Յօդ . 102 : Բնական իշխանաց ժողովը կըրգադարի իր պաշտօնէն , ու իրաւունքէն կըզրկուի , սահմանադրութիւնը ըստ օրինաց հրատարակուելէն իրեք ամիս ետք , կամ առաջ թէ որ առաջին օրինադրական ժողովը ալ աւելի շուտով սկսուի :

Սահմանադրութեան օրինաւոր հրատարակումը նոյն օրէն կըսկսուի որ Թագաւորը երդում կընէ :

Յօդ . 103 : Արկայ սահմանադրութեան հակառակ եղած օրէնքները ու հրամանները բոլորն ալ արգիլուած են :

Մասնաւոր կանոններ :

Յօդ . 104 : Բնաւ օրինադրական ժողովը պիտի ըլլայ , ներկայ սահմանադրութեան հրատարակուելը իրեք ամիս անցնելէն ետեւ :

Յօդ . 105 : Մասնաւոր օրէնքներով կանոն պիտի չափուի :

- Պատըսպարին և մարդիկ :
- Պատասխանի անվէհեր
- Մա նա անդէն բարբառեր
- Բամբակենեաց հեղադէմ
- Օքոյն խզեալ ըզնըստ :
- Վա բարձրութիւն և տերև
- Իւ քո հասակ են դերև .
- Պիտանացու չեն այոյ
- Վա իսկ արդիւնք քո հրոյ :
- Թէպէտ և իմ ոչ արմատ
- Ոչ ճիւղ բազմաստ են իսկ արդ ,
- Ըժ զիմ պտուղ բազմաշահ
- Խնդրեն պանդուխտ և ագահ :
- Բնութիւն համայն ըզմարմին
- Ինե ծածկիլ փափաքին ,
- Ըշխարհակալ և արքայ
- Օխ ունել յինքնն ցանկայ :
- Բնկերակից զը շնայից
- Ի ինիմ պատուով գահայից ,
- Իսկ դու խողից զարամուր
- Կոխան լինիս առաւթուր :

Միտիար Գօշ :

Չափեաց ոտանաւոր բանիւք աշակերտ ուն Կերպական դպրոցին :

բաժնուած է , ամէնուն սիրտը ու միտքը կըմիաբանէ : Ես բանիս համար խրկուեցաւ Աոր Հայաստանի ոգին , և երա մեր մէջէն մեծն Միտիարը , որբոց սիրտերն ալ իրենց հարերուն պէս ազգասիրութեամբ վառելու . . . անմիաբանութեան կարծիք ունեցողներուն սիրտը բժշկելու որն որ սիրտերը միտքերը և բազումներն ալ կըթուլցնէ ազգասիրութեան զանքէն :

Չեղի կըմնայ ասկէ ետքը , ո՛վ Ասեմական ժողովը հայրենասէր իմաստնոց , ձեզի կըմնայ հիմայ ձեր հօրը հօգին բոլոր ազգին սրտին մէջ շնչելու . աղիտութեան խաւարը փարատել , քաջալերել զանոնք թէ որ մեկուն սրտին մէջ նախանձ տեսնելով գայթակղին նէ անմիաբանութեան կարծեաց մէջ . վասն զի չկայ այնպէս աղուոր պարտէզ մը , որ բնաւ անպիտան խոտ մը չբուսցնէ : Չեղի կըմնայ ազգասիրութիւնը ու իմաստութիւնը անկիւլ աս մատղաշ տղոց սիրտերուն մէջ՝ որ Թորոքոմայ տունը ձեր սիրոյն իբրև գրաւ կըխրկէ , ու միաբանութեան կարգով զանոնք կապել : Ու ձեզ ալ , ո՛վ մանկուք որ սյսբան ազգասէրներուն խնամքը կըմնայ լէք , ձեզ ալ կըմնայ անոնց առաքինութեանցը ու խրատներուն միաբանութեամբ հետեւիլ , ու քու երկնալոր աջոյգ առատածիր օրհնութիւնը , ո՛վ աստուածարեալ Հայրդ հասարակաց , կնիք ու հաստատութիւն ըլլայ ասոնց լանքերուն , ու իմաստուն ժողովքիս վաստակոցը , և նուաստիս եռանդուն ուխտերուն :

տի դրուի : որչափ չնար է նէ քիչ ատենի մէջ : հե- տաշայ հարկաւոր բաներուն :

Ա. Տէրութեան եպիսկոպոստոսններուն թիւը պիտի որոշուի . ու անանկ միջոցներով պիտի հաւ տատուի : որ արժանաւոր կերպով մը օգնութիւն ըլլայ եկեղեցականաց ու անոնց ընտանեակներու ծախուցը : և այն անձանց որ ասանկ տեղուանք կը ընտանին կամ սրբազան պաշտօն մը կրթարեն հոն :

Բ. Եկեղեցական ընչից և հասարակաց վարժու- թեան :

Գ. Գործածութիւնը ու բաժանումը ազգային երկիրներու . հաշիւը ու վճարումը ազգային պար- տուց :

Դ. Տարագրութեանը :

Ե. Բարեկարգութիւն հարկերու : պարգոթիւն ամէն կերպ կառավարութեան մէջ : և մասնաւորա- պէս դատաստանական կարգաւորութիւն :

Զ. Հաստատութիւն մասնաւոր ատեններու : ծովու վրայ ասպատակութիւն ու նենգութիւն ընող- ներուն յանցանքը դատելու համար :

Է. Կարգաւորութիւն ազգային պահպան զօրայ :

Ը. Օրինադրութիւն զինուորական և ծովային :

Թ. Բաշարութիւն երկրագործութեան և ճար- տարութեան : առուտուրի ու վաճառականի նաւե- րուն :

Ժ. Վճակտոն որոշումն քաղաքական : զինուորա- կան ու ծովային պաշտօնատուներուն :

Յօդ . 106 : Երկրայ սահմանադրութիւնը պիտի ՚ի գործ դրուի : Կորին Վեհափառութիւնը ստորա- գրելուն պէս : Ետեանկալ իշխանաց ժողովը պար- տաւոր է կառավարութեան օրագրին մէջ տպել տալ աս սահմանադրական կանոնները : 24 ժամու մէջ՝ ստորագրուելէն ետե :

Յօդ . 107 : Երկրայ սահմանադրութիւնը՝ Յու- նաց հայրենասիրական պաշտպանութեանը տակն է :

ՁԱՆՁԱՆ ԽՈՒՔԻՔ

Օ. Բիւնիս, 24 Մարտ :

Քաղաքի բարեկարգութիւնը միշտ հաստատուե- լու վրայ է : և սեմափայլ Հանտի պէյլին աշարը շ շահողութեամբը : Յիրաւի շատ անկարգութիւններ ու շատ գանգատներ կը լսուէին ատեն մը չարաբարոյ մարդկանց վրայօք . բայց քանի որ Կորին Վեհափա- թեանը յանձնուած է տեղւոյ կառավարութիւնը : քիչ քիչ ամէն բան կարգի մտաւ . մանաւանդ թէ կանոնաւոր զօրքերուն ամէն կողմ պահպանութիւն ընելովը : մեծ հանդարտութիւն ու հանգստութիւն կը թաղաւորէ հիմակ քաղաքի մէջը :

— Լնցած ուրբաթ աւուտու գաղղ իսկան շոգե- նաւով Պօլիսէն եկաւ Թօսուն փաշան : ու աս աւ- տու Լիւրիտ գնաց : կըսուի թէ ան կը գին պարբա- պապահ զօրքերուն հրամայելու համար :

— Լվալը իսկ կը գրեն թէ ամսուս 14ին հրդեհ մը պատահեց է հոն . ու հիւսիսային քամին սաստիկ փչելով ան ատենը : ահազողի մէջ ձգել է քաղա- քացիները . բայց կառավարիչը ու կանոնաւոր զօ- րաց հրամանատարը ժամանակին հանելով ու պէտք եղած միջոցները ՚ի գործ զնելով : շուտով մարեր է կրակը : հազիւ թէ քանի մը տուն մոխիր դարձը- նելով :

Հետեւեալ յօդուածը կը կարդանք 1 յնտրայի օ- բագրի մը մէջ :

« Ժամանակիս առիւծը հաւակաւոր () քօնէյն է . ամէն մարդ կը ցանկայ տեսնել զանիկա : կամ խօ- սիլ անոր հետ : ճամբան : Տէֆօրմ . Բ. լեւալ ըսուած ընկերութիւնը : ու խորհրդարանի անդամները ան- զամ անոր ետեւէն կերթան :

Լս երեւել անձը՝ աս օրուան օրս ալ աւելի հե- տաքրքրութիւն ու մասնաւոր ազգեցութիւն մը կը պատճառէ հասարակութեան վրայ : քան թէ մէկ ընդհանրական զօրապետ մը բանակի որ յարթանա- կաւ ու փառաւոր հանդէսով քաղաքը կը մտնէ : փո- րագրութեամբ պատկեր շինող բոլոր խանութիւ- րուն ճակատը անոր կենդանագիրը դրուած է իբրև մէկ շքեղ դարձ մը : այլև պատկերազարդ օրագիր- ներուն մէջ : մտաքստեղէն թաշկինակներու : ու ու- կեղօծ ալիւ տուփերուն վրայ :

Լսնցմէ ՚ի զատ՝ հիմակահիմա խիստ փառա- ւոր կոչուեք մը (ղեաֆէթ) ընելու պատրաստութիւն կը տեսնուի : արժանաւորապէս պատուելու համար իւրանտացի ատենաբանը : ու անոր զգացողութեան- ցը սէր ու յօժարութիւն ցուցունելու :

Օտարական մը որ չճանաչէր : թէ ս'ըքան զօրու- թիւն ու բարեկարգութիւն կայ Մեծին Բրիտանիոյ կառավարութեանը ու սահմանադրութեանցը մէջ : չգիտեր թէ արդեօք դատաւորաց հանդարտութեա- նը՝ թէ դատապարտելոյն անհոգ հանդատութեանը վրայ զարմանալ արժան է՝ :

ԱՄԵՏՐԱՍԻԱ ԽՈՒՔԻՔ

ԼՆԳՂԻՆ

Ի Վերբուր, 27 Ֆետրվար :

Բամբակ : Թուլէ : ու շատ քիչ պորժառնու- թիւններ եղան աս շաբթու : որովհետև Լմերիգայի Երիտասարդ Կահանգներէն կը գրեն թէ աս տարուան հունձը՝ իրենց առջև նամակներովը ծանուցած գու- մարէն աւելի ըլլալու է անշուշտ . ստոր համար գնոյ աւանդները ետ քաշուեցան : ու գիները 3 իշան այ- սինքն հարուրին երկու : Լս եօթնեակիս մէջ բոլոր ծախուած բամբակներուն գումարը 16030 հակ է . որնցմէ 12000 հակը գործատուներու համար աւ- նուած է և 4030 սիէքիւլափօն կը կին բարձր գինե- լով ծախելու համար . իսկ գուրսէն եկած բամ- պակներուն գումարն է 14754 հակ . 8131ը Միա- ցեալ՝ Կահանգներէն : ու 6673ը Պրաղիէն :

ԳՆԳՂԻՆ

Մարտիկա, 9 Մարտի :

Բամբակ : Լմերիգայէն եկած լուրերուն պատ- ճառովը՝ աս ապրանքին առուտուրը քիչ մը թուլ- ցաւ : և ամէն տեսակին գիները իշան . նմանապէս Իդմիրու բամբակները անցած շաբթու ծախուած գիներէն հարուրին 3 կամ 4 վար իշան :

Մետաքս : Բ. իջ մը թուլ է . բայց գիներուն փոփոխութիւն մը չեղաւ . Լս շաբթու ընդ ամէնը 70 հակ մետաքս ծախուեցաւ զանազան տեսակնե- րէն : Բաղաքիս մէջ շատ ապրանք չգտնուելով : կը յուսացուի որ գիները հաստատ մնան :

Չէթ : Գործատան վերաբերեալ ձէթը միշտ կուզուի . բայց գիներուն նոր փոփոխութիւն մը չե- ղաւ :

Շուշմայ : Լս սերմը միշտ կուզուի : և գիները հաստատ են . Կգիպոտսինը՝ 48էն 49 Փուանքի 100 քիլօկրամն : հարուրին 1 կամ 2 վար իջեցնելով :

Ծախքը վաճառողին վրայ . նմանապէս իզմիրինը 60 Փուանք :

Յորեն : Յուսալով որ կառավարութիւնը ցորե- նին տուրքը իջեցնելու է ապրիլի կամ մայիսի մէջ : ու գրառէն ալ չգալով : այս անգամ ցորենին գինը բարձրըցաւ և շատ ապրանք ծախուեցաւ աս շաբ- թու :

ԻՒՆԻՒՆ

Թրեսա, 22 Մարտի :

Բամբակ : Լմերիգայի աս տարուան հունձը շատ ըլլալուն նորէն աս ապրանքը թուլցաւ : և հիմայ գնոյ առնող չգտնուիր : Հասարակօրէն ամէն ապ- րանք անշարժութեան մէջ է . մինակ արմուիք (ղահ- րէ) քիչ շատ կուզուի :

ՏԱՃԿԱՍՏԱՆ

Օ. Բիւնիս, 24 Մարտ :

Քաղաքիս առուտուրը գրեթէ մի և նոյն վիճակի մէջ է . բայց աս անգամ բամբակներուն համար յաջողակ լուր մը չաւանուելով Լւրոպայէն եկած շոգեմաւերէն : թուլութեան մէջ ընկան : ու գիները միայն անուճով են :

Սօյուճան	225-230
Բրքաղաճը ու Գատապան	220-225
Պայընտըրը ու Խնըխը	200-205
Լճիօն : Թուլ է	76
Մեղրամմ : Կուզուի	960-965
Կապաստակի մորթ : Լուսջին տեսակը	310-320
հարուր հատը :	
երկրորդը	200-210

Ոչխարի բուրդ : Կուզուի և բարձր գիներով կը- ծախուի : Լճի բուրդ . չգտնուածը 20-35 դուառը 2 օխան :

Տորոն միշտ կուզուի . նմանապէս ցորենը և շուշմայն — Լս շաբթու երկու եւրոպացի վաճառական- ներ անանկացան քաղաքիս մէջ . մէկը երկու միլիոն զուռուշի չափ : մէկը՝ հինգ վեց հարուր հազար զուռուշ արտոքով . աս զիպուածը մեծ անհաւա- տարմութիւն պատճառեց վաճառականաց մէջ :

ԾԱՆՈՒԾՈՒՄ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆԻ

ՆՇԵՆՆԵՂԻՐՈՎ ԼԵՄԵՐՈՂ ՈՒԹԻՆ

ՈՐ Ե

ԵՆՆԵՊԵՆ

Վեննայի Միթիթարեան միաբանութենէն վերապա- տուելի Հ. Գուկաս վարդապետը շինած է պարզ գրա- բառ լեզուաւ, ու անցած տարի տպուած է : Լս գրքիս օգուտը մանաւանդ թէ հարկաւորութիւնը մէկ խօսքով մը ըսելու համար, արժան կը համարինք ծանուցանել որ ալճեպրան բոլոր ուսմանց գուրը կամ բալլեքն է : Մէկը թէ որ աս գիտութիւնը չի սորվի, չի բնար ուսումնակա- նութեան մէջ . քայլ մը ընել . երկրաշարժութիւնը, բնա- կան գիտութիւնը ու աստղաբաշխութիւնը ստոր անանկ հարկաւորութիւն ունին, ինչպէս որ գիր ու բառ հար- կաւոր է խօսք մը շարադրելու համար :

Ուստի ամէն ուսումնական աղգակիցներնիս կը յորդո- ընք ասից ստանալու, ու աս գիտութեան ետեւէն ի- նալու : Լսկից ետք անմիջապէս երկրորդ հատորը պիտի տպուի որ է Լեռնաշարժութիւն :

Դ ՏՊԱՐԱՆԻ ՍՏԵՓԱՆԵՆՈՒԹ ԳԱՊՕԵԱՆ